

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Խորոնք գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվություն**

Արմավիրի մարզի Խորոնքի գյուղապետարանը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և ելնելով Հայաստանի Հանրապետության Կառավարության և Արմավիրի մարզպետարանի որոշումների պահանջներից, կատարել է ներքոհիշյալ աշխատանքները.

Գործավարություն

2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել են 31 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 297 տեղեկանքներ և բնութագրեր: Ուղարկվել են 68 պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 29 որոշում և արձակվել է 9 կարգադրություն:

Ավագանու գործունեություն

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է երեք հերթական նիստեր:

Գյուղատնտեսության բնագավառ

Գյուղապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին գյուղացիական աշխատանքներում: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում առկա հողատարածքներն են.

- բնակավայրային նշանակության հողեր` 142 հա,
- գյուղնշանակության հողեր` 525 հա,

- վարելահողեր ` 372 հա,
- խաղողի այգի` 5.3 հա,
- պտղատու այգիներ ` 0.35 հա:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար բարելավվել և հարթեցվել են դաշտամիջյան ճանապարհները, որի համար ծախսվել է 200000 դրամ գումար:

Առաջին կիսամյակում հացահատիկային ցանքատարածությունների համար տրամադրվել է 86 տոննա ազոտական պարարտանյութ:

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչների կողմից արտադրվել և հանրապետության շուկաներ է արտահանվել շուրջ 3100 տոննա բանջարեղեն, 100 տոննա ձմերուկ, 20 տոննա կարտոֆիլ, 500 տոննա հացահատիկ:

Անասնազխաքանակ.

- խոշոր եղջերավոր անասուններ` 265 գլուխ,որից կովերը` 93 գլուխ,
- Մանր եղջերավոր անասուններ ` 59 գլուխ ոչխար,որոնցից մայրերը` 50 գլուխ,
- խոզեր` 136 գլուխ,որոնցից մայրեր` 45 գլուխ,
- Մեղվաընտանիքները` թվով 35:

Քաղաքաշինության բնագավառ.

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել գյուղում բնակարանաշինության ոլորտում: 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տրվել է շինարարության 3 թույլտվություն:

Վերանորոգվել է գերեզմանատան ջրագիծը, որի համար տրամադրվել է 130000 դրամ գումար:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կազմվել է ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը և հանձնվել մարզպետարան: «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ կատարվել է 15 ֆերոմենային թակարդների տեղադրում, որոնք նախատեսված են մշակբույսերը միջատներից պաշտպանելու համար:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ.

Նախատեսվում է վերանորոգել մայրուղու ասֆալտապատ ճանապարհը, որի համար տրամադրվել է 990000 դրամ:

Մեծ ուշադրություն է դարձվում գերեզմանատանը հողհատկացման աշխատանքներին. այն կատարվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հանձնարարականի:

Աղբահանության բնագավառ.

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան: Այդ աշխատանքները կատարելու համար հատկացվել է 1400000 դրամ գումար: Աշխատանքները կատարվում են շաբաթական մեկ անգամ:

Մշակույթի և սպորտի բնագավառ.

Գործում է ընթշամարտի խմբակը: Գյուղապետարանը հատուկ ուշադրություն է դարձնում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը՝ միաժամանակ ցուցաբերելով իր աջակցությունը բոլոր հարցերում:

Վերջին զանգի կապակցությամբ հատկացվել է 200000 դրամ գումար, և այդ գումարով շրջանավարտների համար գնվել են նվերներ:

Մայիսի 9-ի՝ Հաղթանակի տոնի կապակցությամբ հատկացվել է 130.000 դրամ գումար և կատարվել են գնումներ՝ հյուրասիրության սեղանի համար:

Հյուրասիրությանը մասնակցել են պատերազմի վետերանները, ավագանու անդամները, գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների աշխատակիցները և համայնքի բնակիչները:

Սոցիալական բնագավառ.

Գյուղապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել Հայրենական մեծ պատերազմի վետերանները, Արցախյան հերոսամարտի մասնակիցները, նպաստառուները, այրիները և թոշակառուները:

2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում 1.090.000 դրամ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել հիվանդ և սոցիալապես անապահով 16 (ընդամենը տրամադրվել է 580000 դրամ) և նորածին երեխաներ ունեցող 17 (ընդամենը տրամադրվել է 510000 դրամ) ընտանիքների:

Հողի հարկը և գույքահարկը.

2014 թվականի հունիսի վերջի դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 1.304.462 դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 15.3 տոկոսը: 2014 թվականի առաջին կիսամյակում գույքահարկի գծով բյուջեի եկամուտների մասով գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 1.529.925 դրամ գումար, որը կազմում է տարեկան գույքահարկի 42.6 տոկոսը:

Վարձակալական հողերի վարձը 2014թ. 1-ին կիսամյակում կազմում է 995.5 դրամ գումար, իսկ տեղական տուրքերը՝ 14.9 դրամ գումար:

Բյուջեի ծախսերը.

Խորոնքի գյուղապետարանը 01.01.2014թ.-ից մինչև 30.06.2014թ. կատարել է հետևյալ ծախսերը.

1. Վճարել է ընթացիկ աշխատավարձ -	10992.81 դրամ գումար,
2. Մասնագիտական ծառայություն-	80,4 դրամ գումար,
3. Համակարգչային ծառայություն-	74.2 դրամ գումար,
4. Էներգետիկ ծառայություններ -	231.95 դրամ գումար,
5. Մանկապարտեղի սուբսիդիա -	3190.1 դրամ գումար,
6. Անապահով ընտանիքների համար -	1120.0 դրամ գումար,
7. Աղբահանություն -	700.2 դրամ գումար,
8. Գրեմական պիտույքների համար փոխանցվել է -	100.0 դրամ գումար,
9. Կապի ծառայություն-	109.93 դրամ գումար,
10. Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր -	380.0 դրամ գումար,
11. Դիակառքի ծառայություն-	100.0 դրամ գումար,
12. Ծաղկեպսակի ծառայություն-	150.0 դրամ գումար,
13. «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրին. աշխատավարձ-	2619.71 դր. գումար,
14. Տրանսպորտային նյութեր -	450.0 դրամ գումար,
15. Միջոցառումներ -	560.0 դրամ գումար:

Ազգաբնակչություն.

Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2914 մարդ: 2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ծնվել է 21 երեխա և գրանցվել է 16 մահացություն:
Ընտանեկան նպաստառուների թիվը կազմում է 33 մարդ, թոշակառուներինը՝ 267 մարդ:

Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ դպրոց, որտեղ սովորում է 307 աշակերտ :Համայնքում գործում է մանկապարտեզ՝ 62 երեխայի հաճախումով:Մանկապարտեզում աշխատողների թվաքանակը կազմում է 14 աշխատող:

Համայնքի հիմնախնդիրները.

ա. համայնքի հիմնախնդիրներից է հանդիսանում համանքային ճանապարհների նորոգումը:

բ. ամբողջ համայնքի՝ շուրջ 9 կմ 600 մ ձգվող ջրագծի կառուցումը, որը հանդիսանում է համայնքի ամենահրատապ հարցերից մեկը, քանի որ ստորգետնյա ջրերի մակարդակը իջել է 6-9 մետրով, իսկ համայնքի բնակչությունն ամբողջովին զբաղված է ջերմոցային տնտեսությունների մշակությամբ:

գ.. վերանորոգման կարիք ունեն նաև համայնքի մանկապարտեզը և մշակույթի տունը, դպրոցում էլ բացակայում է սպորտդահլիճը:

Խորոնք համայնքի ղեկավար՝



/Ա.Նահապետյան /